

լուածոց մէջ ալ: Սակայն այս տեղուան *պարկերն*ը գեռ հայ գրչազրաց կամ մատենադրաց մէջ երեւան չեւաւ:

Փոխանակ “ի սրբոյ Կուսէն”, ի յոյն բնագիրն ունի *միշտ Կոստէն*, կամ վասն զի թարգմանիչը *ἄγιος* կարդացած է *ἀεὶ* կարդալու տեղ, կամ իրօք անանկ էր իր յոյն օրինակը:

9. Հոգւովն սրբով, որով էառ մարմինն հոգի եւ միտս եւ զամենայն որ ինչ է ի մարդ նշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Մասնկ է հիմնական հայ բնագիրը. սակայն զանազան մասանց մէջ յունականէն կը տարբերի:

ա. Փէշտիմալճեան կրտէ թէ “որով”, զհոգին սուրբ կը յարաբերէ¹. սակայն հին մատենեք չեն կարդար “որով”, հապա որ եւ, եւ աս է յոյն բնագրին համապատասխանողը: Մասնկ նաեւ Վամբրոնացի իր հանգանակի Մեկնութեան մէջ:

բ. “Մարմին, հոգի եւ միտս”: Մասնկ հասարակ ընթերցուածք, սակայն յոյնն է *մարմին եւ հոգի*, եւ այլն, որուն կը յարմարի հայ բնագիրը՝ *Երեսի Ե Խնող թղթոյն մէջ ԴԲ դարուն*:

գ. Տեսանք քանի մը գրչազիր, քանի մ’ալ տեսած է Փէշտիմալճեան, որոնց նաեւ Վամբրոնացին կը միաբանի հանգանակի Մեկնութեան մէջ, որոնք “որ ինչ է ի մարդ, ին տեղ՝ կրտեն որ ինչ է մարդ: Վիչ մը ետքը պիտ’որ տեսնենք² որ թարգմանչին ձեռքի յոյն բնագիրն աս վերջին կերպովն է եղեր:

դ. Յոյն բնագրին մէջ “ի մարդ”, էն ետքը անմիջապէս կ’աւելցուի՝ *ստունց մեղաց*, ասիկայ հայ գրչազիրներէն գեռ երեւան չեւաւ. սակայն Վամբրոնացին³ ճիշդ աս տեղը կը յարէ կամ կը կարդայ՝ *բաց ի մեղաց*, (*χωρίς αμαρτίας*):

ե. Զեռազիրներէն ոմանք ունին՝ հասարակ ընթերցուածին համեմատ՝ “ճշմարտապէս եւ ոչ կարծեօք”, ոմանք զարձեալ՝ աս վերջինն ազաւաղելով՝ “ճշմարտապէս եւ ոչ կարծիս ունելով”: Յոյն բնագիրն աս երեք ընթերցուածէն մինակ միջինը կ’արդարացնէ, որն որ նախընթաց որ եւին հեռ կը կապուի: Ուստի բոլոր նախընթաց մասունքն ալ մէկտեղ առնելով՝ սանկ է սկզբնական եւ վաւերական ընթերցուածք: Ընաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն, Հոգւովն սրբով, որ եւ մարմինն, հոգի եւ միտս եւ զամենայն որ ինչ է մարդ, նշմարտապէս եւ ոչ կարծեօք, ունելով:,”

Վանի մը դար ետքը աս “ունելով”, զարբերութեան ծայրէն վերցուելով, դուռեցաւ եւսո մը անոր սկիզբը, որով անշուշտ աւելի զիւրիմաց եղաւ յօգուածք: Ես է պատճառը որ քանի մը գրչազիրք նոր “էառ”, ը առնելէն ետքն ալ միանգամայն հին “ու-

¹ Լուսաշաւիղ. էջ 50:

² Տես էջ 18, վերջին տող:

³ Հանգանակի մեկնութեան մէջ: